

ՀԱՆԴԻՍ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ

Տ Ա. Ր Ե Ր Ք

Կ Ե Ն Դ Ա Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

(Տէս էջ 250)

ԳԼՈՒԽ Ե

ԱՌԵՆՉՈՒԹԵԱՅ ԳՈՐԾԱՅԱՅՆԱԹԵԱՅ

104. Արմենուրիան գործառնուրիւնք . — Ինչպէս ուրիշ տեղ տաս և կը, Անուն և յնունք՝ տնկային կենաց գործառնութիւնք կ'ըստին. վասն զի կենդանեաց և բռուսոց հաւասար են : Ասայն բաց աստի՛ կենդանեաց մէջ կան ուրիշ գործառնութիւնք ալ զորս կենանական կենաց կամ Արմենուրիան զործառնուրիւնք կ'անուսնենք . ուրովիշտես ասոնցմով կենդանիքթ է իրերաց և թէ զիրենք շրջապատող էակաց հետ կը հաղորդակցին : Այս գործառնութիւնքն են Զայական նորիշեւ և Շարժուրիւն :

Կը տեսնենք նմանապէս թէ կենդանիք զանազան առ տիճանաւ ուրիշ կարողութիւնք ալ ունին, որք զվերցիք ժալ կարողութիւնս կը գործադրեն . այսպէս են խմացականուրիւն, Զայն, և այն :

105. Զայականուրիւն : — Զայականութիւն կ'ըստի այն կարողութիւնն որով կենդանիք իրենց վրաց եղած արտաքին ազդեցութիւնքը կ'իմանան :

106. Շարժուրիւն : — Շարժութիւն ըստածն այն կարող ութիւնն է, որով ամենայն կենդանիք ինքնայօք շարժմունքեր կը կատարեն : Այս կարողութեան ձեռօք կենդանեաց բազմաթիւ տեսակներ իրենց զիքնենք կը տեսափոխինքն է, որով ամենայն կենդանիք ինքնայօք շարժեցութեանց կարելոր թեամբ՝ զանազան գործառնութեանց կարելոր եղող գործեր կը կատարեն, և իրենց անձնաւ



Զե 96. Զարդն դրութիւն

կան պաշտպանութիւնն 'ի գործ կը դնեն :

107. Թէ զզոյականութիւնն և թէ շարժութիւնն յատուկ գործարանաց ձեռօք կը կատարուին . և այս գործարանք լրացին զրութեան կը պատկանին : Զայականութեան ժառայող չղերըն զայուսն չիղիք կ'անուանին . իսկ շարժութեան ժառայողք՝ շարժութիւր կը կատարին :

108. Զայոյին դրուրիւն : — Այս դրութիւնն կակուղ յատուկ նիթէ մի կը բարկանոց, որ 'ի սկզբան լցիծ է և ըստ անման հասակ կը թանձրանայ . զաֆկայ զայոյին հիշարած կ'անուանենք : Իւր տեսքն խիստ կը փոփոխի . երբեմն սպիտակ է, երբեմն գորշագոյն և կամ մասրագոյն . գարձեալ, երբեմն մեծամեծ կոյսեր կը կազմէ որք ծղիկը կամ կոյտը ծրղիկային կ'անուանին . և երբեմն երկայն շղթաներ կը յօրինէ, որք վերցիչեալ ծղիկներէ կը մեկնին, մի յիղը կը կոյսեն : Յետինքս բազմաթիւ ճիւղեր բաժնուելով մարմնոցն ամէն մասանց մէջ կը տարածուին :

Ի մարդն և մարդուս աւելի մեծաւոր քտնուուղ բարձրագոյն կենդանեաց մէջ, լրացին կազմարանն երկու տարրեր մասերէ կը բարկանոյ : Այն կենդանական կենաց կամ ուղղային և ողնայական դրուրիւն կ'անուանի . միւսն տրինկային կենաց


կամ ծղիկային դրուրիւն կ'ըստի : Դարձեալ, այս երկու դրութեանց իւրաքանչիւրն երկուքի կը փերածուի, մին կեղցրուական և լրացին կցտերէ ձևացած է . միւսն շրջարողք՝ որ 'ինդաց

կը կազմուի. և ասոնք վերցիւեալ կեզրոններէ մելինելով մարմոյն այլ և այլ մասանց կ'ընթառնան (Ձև 96):

109. Կենդանական կենաց ջղային դրուրիւն. — Կենդանական կենաց ջղային դրուրիւն կեզրոնական մասն՝ ներպատճ կամ ուղային և որնայարական խարիսն կ'անուանի: Ասոր մասկերեսութիւն վրայ խոր ակօնուեր կան, և ինքն երեք հասուած բաժնոււած է, մին վերին և կամ

ուղեղին (Ձև 97. 4-7) երկրորդն ստորին, որ է ուղղակ (Ձև. 97. 7). իսկ երրորդն՝ ուղեղի և ուղղակի միջավայրն կը գտնուի, և է երկայնաժամանակ (Ձև 97. 12-16): Յետնոյս կը յաջորդէ ոյնածունեն: Այս մասունքներս սոկրապատենի մի մէջ տմիոփուած են. նուայի երեքը գանձով կը պաշտպանին, իսկ վերջինս ողնայարի մէջ գետեղուած է:

Այս չորս մասունքս կենդանական կենաց



Ձև 97. Ներագանկի խարիսութ

1. Առաջակողմեան կամ ճակատային բլթակ, 2. Յետակողմեան բլթակի սեպոսկրային մասն 3. Խթաղակեան մասն նոյն բլթակի: 4. Առաջակողմեան ծայր ուղղակի մէծ հերձան: 5. Յետակողմեան ծայր նոյն հերձան: 6. Հերձութ Սիլվիոի: 7. Ուղղային մասն՝ Պիլայի ուղղային մէծ ներքաբին: 8. Մոխրագոյն գլուխի և մազապային ցիի բռւն: 9. Գուկած վշտիկ: 10. Միջնացօզային միջոց: 11. Յօդուն ուղղեցի: 12. Օղակած զարտաւած: 13. Շնուայրական հրճէցի: 14. Առաջակողմեան բորբ: 15. Հատած մարմին: 16. Գրասած մարմին: 17. Ուղղային կիսագունդ: 18. Միջային հերձութ ուղղակի: 19. Այրանեակ մանոււած հասունեաց ցի: 20. Այլվեան ներձութ սանմասաւորդ մանուած: 21. Մասուած ձամձան: 22. Անակողմեան հոտութեան ուղղակողմեան հոտութեան ցի: 23. քածանեալ հատուածան ըլլուց տուցներու համար: 25. Կրճէզ հոտութեանց ցի: 26. Անութ տեսուական լուց: 25. Ական շարժող ցի: հասարական: 26. Կրակնչից: 27. Ստուար և փոք արմաս եռորեկի: 28. Առուացին շարժող ցի: ական: 29. Երեսաց ցի: 30. Լուղակն ցի: Վրիպակէրկի հավաքին ընդ առանցոյն: 31. Լեզուա-ստրանքներկրանացին ցի: 32. Թօքա-ստամեպային ցի: 33. Ողնայարական ցի: 34. Աւագ լեզուալիցի:


ամենափափուկ և միանգամայն ամենէն կարեւոր գործարանքն ըլլալով. 'ի բնութենէ զանազան պատուարներով պայտապանուած են. յօրոց առաջինն խստենի կը կոսուի, երկրորդն սարդուստենի և երրորդն գորոգինի:

Ուղեղ. — Վերայիշաւ զանազան մասանց մէջն, զորս անդամանզինն ուղղային և ուղայարական խարիսի մէջ կ'որոշէ, ստոյդ ուղեղը գանձի առաջակողմեան մասն կը գրաւէ (Ձև 97. 4-7): Խորին ակօսով մի իւր միջակետէն երկու

կիսագունդը կը բաժնուի, և բարձրագոյն կենդանեաց շատերուն մէջ ասոր երեսը մանուածք անուանեալ խորապարորտ ցընան: երսով ծածակուած է: Ե- որովհետու կ'ենդանուցն ամենաբարձր կ'սորովութեանց կ'ործադարրութեան կը ծառացի, այն պատճառաւ ալ ջղային դրամթեան աղնուացոյն մասն կրնաց համարուիլ:

Ուղղակ. — Ուղղակն (Ձև 97. 17) գանկի յետակողմեան մասն կը գրաւէ, և իւր վերայարմաթիւ խոտորնակ ծագեր ունի: Կը կար-

ծուիթէ ասոր պաշտօնն կենդանւոյն զանազան շարժմանքներն ուղղելն ըլլայ:



Ձև 98. Աղջային կոյտէ կը մեկնին տեսանելեաց, լսելեաց, հօտու տելեաց, ճաշակելեաց, և այտիցքանի մը մասանց շարժող չեկերն, դարձեալ տնկային կենաց գլխաւոր գործարաններուն ընթացք զանազան ճիշտ զաւորութիւնն, ինչպէս սրտի, իրոց և ստամիքի: Խոկ ողջ աղջային կը մեկնին շաշափելեաց և մարմնոյն զանազան միւս մասանց շարժութեան ծառայող չեկերն:

Երբ չլցաց շարունակութիւնն ընդհատի, կամ հիւանդութեանց պատճառաւ չկարենան իրենց պաշտօնն կատարել, այն ատեն մի և նոյն ջղաց ճեն վերաբերեալ թիւն ունեցող անդամքն ալ գործել կը դադրին և կ'անդամալուծին:

Կրնայ ըլլայ ու մարմնոյն անդամոց մին կամ ամրողապէս և կամ մասամբ մի անդամալուծի: Առաջին դիպաց մէջ՝ մի և նոյն անդամոց թէ զգացուն և թէ շարժող չեկերն 'ի միասին կ'անդամութիւնն. և հետևաբար նոյն անդամն ոչ կը զգայ և ոչ կը շարժի: Խոկ երկրորդ դիպաց մէջ՝ կամ զգայուն և կամ շարժող լինք միայն կ'անդամալութիւնն. այնպէս որ վերոյիշեալ անդամն թէկէս չի զգա՞ր բայց կը արժի. և կամ կը զգայ, սակայն չի կրներ շարժիլ:

Ջղաց գոյսութիւնն միայն զգայութեան չի ժառայեր. այլ պէտք է որ ասոնց վերաբերեալ գործարանք ալ գտնուին, և միանգամայն ողջ և առող ըլլան: Այսպէս նաև եթէ գործարանք գտնուին, բայց չեկերն անընդհատ չանցագութէ չեն զգար:

110. Ճկնային կենաց չափային դրորիշիւն. - Բարձրագոյն կենդանեաց մէջ ուղղային և ողնարական դրութիւնն 'ի զատ, որոյ վրայ մինչև ցարդիսաւցանք, ջղաց տարբեր դրութիւն մի ալ

կայ: Եւ որովհետև ասիւ կայ մասնաւորապէս կամ մազ ենթակայ չեղող, և կամ անհատէ առանց անդրագառնալու կատարուող գործառնութիւնքն ուղղելու կը ծառայէ, այսինքն է ա՛կային կենաց գործառնութիւնքն, ինչպէս մարտ զութեան, չնառութեան, թեան, արեան ջրանի, և այլն, սոյն պատճառութեանից կենաց դրութիւնքն, ինչպէս մարտ զութեան կը դրորիշն կոչուեցա:

Մի և նոյն զրութիւնը ծի ի ային դրութիւնը կամ նոյնակիր մեծ չիղ ալ կ'ըստի: Ա՛կայ ուղղակից լարերով իրարութեան միացած բազմաւթիւնը թիւ կորիքի զայտին կոյտերէ և զանազան ըշղերէ կը բացահանայ: Յնտինքն երթարով ուղղակից և ողնացարական դրութեան ջղաց ճեն կը բերանակցին, կամ մերձակայ գործարանաց մէջ կը տարածուին: Այս ջղային կեղորնեն դրութիւնը (Ձև 99) անունն կը կրեն, և զինու, պարանոցի (Ձև 100) կրծոց և որովհանի մէջ կը գլունին: Մեծաւ մասամբ ողնայարի անըն անոր երկու կողմանքն կանոնաւոր կերպով շարուած են. և զինէ սկսեալ մինչև ցրուվայնակներ կը կին ցլթաներ կը կազմն: Բայց, ինչպէս ըսկնիք, ասոնցմէս բարձրմայն նաև ուրիշ մասանց մէջ ալ կը գտնուին:

111. Գդայարանք. - Կենդանիք զգայարան ձեռքոց արտաքին մարմնոց իրենց վրայ կատարած ազգեցութիւնքն կ'իմանան: Ի բարձրացոյն կենդանիս թուով հրնգ են, շշափելիք, ճաշակելիք, հոտուիկիք, բնելիք և տեսանելիք: Ակայն այս բարձրացոյն կենդանեացձէ կամաց կամաց վար իննելով՝ կը տեսնենք որ վերոյիշեալ զգայարանաց թիւն կը նուազի, մինչև ասորնացին դասու կենդանեաց մէջ շշափելիք միայն կը մնայ: Եւ նոյն իսկ միւս զգայարաններն ունեցողք մարմնոց ազգեցութիւնքն զանազան աստիճաննազ կ'իմանան, այսպէս աշը ունեցող ամենայն կենդանիք՝ մարմնոց գոյներն, անոնց ճիշդ ձեւն և հաւեմասաւանն հեռաւորութիւնն հաւասարապէս չին իմանար. և լսելիք ունեցողք՝ ձայներն հաւասար աստիճանա, չին զգար:

Ամենայն զգայարանք, բայց 'ի շշափելեաց որ մարմնոյն բոլոր մակերևութիւն վրայ տարածուածէ, յասուէկ գործարան կամ կազմարան մի ունին. բայց այսու հանդերձ կենդանիք չին կա-


ՊՐԱՆ Դ.

բող ամենելին բան մի զդակ՝ եթէ նոյն գործարանի ուղղակի զիխաւոր ջղային կեզրոնին հետ հաղորդակցութիւն շանենան։ Այսպէս, զդայարանաց նղերուն՝ ուղեղի հետ ունեցած հաղորդակցութիւնն ընդհանուրի, միանդամյան նոյն զդայարանաց վերաբերեալ կազմադրանքն ալ ամենելին աղդեցութիւն ինը ընդունիր։

112. Շօշափելիք. — Ամենայն կենդանիք շօշափողական զգայութիւն մի ունին, որ մորթոյ վրայ առհասարակ տարածուած է. և անով կ'ի.

մանան զգայական մարմեց ներկայութիւնն։ Սակայն ընդհանուր զգայութենէ զատ, նոյն կարողութիւնն քանի մի մասնաւոր գործարանաց մէջ այնքան զօրաւոր և փափուկ է, մինչև առնոց ձեռք կրնան մարմեց զանազան յառ կութիւնքն առնչնալ. օրինակ իմն պնդութիւն, անհարթութիւն, կարծրութիւն, ձեւ, և այլն։

Շօշափողական կարողութեան ամենէն զարգացած կ'էտք՝ սովորաբար ունեխեաց ծայրը պատող մորթոյն մէջ կը կայանայ. ինչպէս 'ի Մար-



Ձև 100. Նղեկային գրութեան վերին մասն

1. Թոքա-ստամոքսին կամ ուղղային լիդ: 2. 3. 4. 5. Բերանացութեան նրբաթելից նոյնակիր մեծ չղի՛ բաժնուելով՝ ի թոքու՛ի ստամոքս, և այլն 6. 7. 8. Թոքա-ստամոքսին ուսու՞ր որ ի խոյսով կ'երթան: 9. Գնոցուն կամ ստորին խոչափողային լիդ՝ որ պարանոցի ստորոտէն բարձրանալով՝ ի խոչափու՛կ'երթան: 10. 11. Ստացին ձիւ՛: որք ՚ի սերս կ'երթան: 12. Ստորին կամ կրապին ծղիամձեւ կրասա: 13. Թոքային կրասա: 14. Լողուային լիդ: 15. Վերինական մասն մեծ նեղուածզի: 16. Նեղուա-ստորվնացերականային լիդ: 17. Ողնոցարական լիդ: 18. Ծածրակային լիդ, երկրորդ զուգի: 19. Նղեկային երրորդ լիդ: 20. 21. 22. 23. 25. 25. Զորորոր, էրիպիերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութերորդ ծոծրակային լիդ, որք առաջն թիկնացին լիդ կը իրանակցին, բազկաց կրասակը կազմելու համար: 24. Վերին ծոծրակային ծղիկ մեծ նոյնակիր լիդ: 25. Միջն ծոծրակային ծղիկ: 26. Ստորին ծոծրակային ծղիկ: 27. 28. 29. 30. Թիկնացին ծղիկ:

դրս և 'ի կապիկն՝ մատանց մասուտ ծայրերն. Զիօց և Եղանց՝ թթանց եղերքն. Փղաց՝ պատիճն. Մընաբաղից լեզուն, և այլն: Այս պատճառաւ մի և նոյն գործարանի՝ 'ի բազմաթիւ

կենդանին՝ մասնամայն կերակրոց ընտրողութեան կը ծառացնեն:

Մարդուու ձեռքերն շօշափելեաց պանչելի գործարանի են. թէ. մատանց ծայրերը պատող

**մաշկին կազմութեան պատճառաւ, և թէ ըթա-
մասի լողդիմագրութեամբ՝ որով իւր զըննած
մարմինքն մատանցը մէջ դիւրա կը ճնչէ, և ա-
նոնց յատկութիւնքն լաւագոյն ևս կ'իմանայ:**

**Ըսինք որ գգայականութեան զարգացած կէ-
տըն ի մորթն է, այս երկու մասերէ կը բաղկա-
նայ. այսինքն են մաշկ և վերնամաշկ:**

**Մաշկին կարգ հարգ նեերդներէ և խաչածե
հիւսուած շերտերէ կը կազմսի: Շարակցական
հիւսուածով իւր ստորակայ հիւսուածոց հէտ
միացած է. արտօքին մակերևութիւն վրայ պր-
տուկը անտանեալ անթիւ կարմրագոյն ելուստ-
ներ կը գտնուին:**

**Վերհամաշկն որ զմաշկ կը ծածկէ, փոփոխա-
կան թուով քանի մի շարք ճնշեալ խորդերէ կը
բաղկանայ. և հետևաբար իւր թանձրութիւնը
մարմինք զանազան մասանց վրայ կը տարբերի:
Երբեմն նրբագոյն է, ինչպէս 'ի թրթուն. և եր
թեմն ստորա ինչպէս 'ի գարշապարս, և կամ
խորդ գործիքներ յաճախ գործածող բազմաթիւ
արուեստաւորաց ձեռքերուն վրայ: Վերնամաշ-**
**կի մակերեսոյթը վիսար անուանեալ անթիւ
ծակտիներով լի է, որք մաշ' ին պատկանց կը հա-
մապատասխանեն, և զիրտոն կ'արտաքսեն:**
**Վերնամաշկն զմաշկ մարմնոց ուղարկի և սաս-
տիկ զրդուի ազդեցութենէ կը պահպանէ, և
մորթային գործիքացումը կը չափաւորէ:**

**113. Ճայիկիթիք. — Ճայակենեաց այլ և այլ
իրաց համը կ'առնունք. սակայն ամենայն մար-
մինք այս զգայանանց վրայ չեն կրնար ազ-
դել. այն պատճառաւ ալ իրեն համեղ և ան-
համեց կը բաժնուին: Մարմին համեղ կողուելու
համար անհրաժեշտ պէտք է որ լրձունքի և
տողկաց մէջ լուծուին. այնու ճայակենեաց գոր-
ծարանը կը թանան, այսինքն, բերանը և մա-
նաւանդ լիզուն:**

**114. Կարծուի մակերեսոյթը պամկամբը լի է, յորոց
ումանք լորդանոր են և սակամաթիք, այլք չատ-
աւեկի բարանամիթի, կոնանեալ և անհամար անօթ-
ներ և լցեր ունին: Լեզուազիլ (Ձև 100. 44)
յետին ճելզաւորութիւնքն ասոնց մէջ կ'աւար-
տին. և կը կարծուի թէ ճայակենեաց զգայու-
թիւնն մասնաւրապէս աստինուով կը կատա-
րուի:**

**114. Հոսուելիթիք. — Հոսուելիքի իրաց հոսը
կ'առնունք: Մարմին մը հոսուաւէտ ըլլապու հա-
մար, պէտք է որ իրմէ փարիկ մասնիկնե ան-
ջատին, և որոյ հետ ՚ի միրան հոսուելիքաց
գործարանի մէծնենան: Այս գործարանն 'ի
բարձրագոյն կենդանիս, անդային խորշը ըստ
առող մարտապային թաղանթի վրայ կը կայանայ.
և հոսուելիքաց զղի զանազան ճիւղաւորութիւն-
քին 'ի ամա կ'աւարտին:**


**Նոյն գործարանի սրութեան աստիճանն,
մասնաւրապէս մաղասային թաղանթի տա-
րածութենէն կախումն. ունի. և ստուգիւ ա-**

**մենազգայուն հոտոսելիք ունեցող կենդանիք՝
ունդային խորշերու մէջ շատ մը ծալքեր ունին որ
իւր մակերեսոյթը կ'առաւելուն:**

**Զկանց ոնքային խորչերու յատակն գոյն է,
և իրաց հոտուէտ մասնիկն լրիրը կը տանին.
հաւանարէն այն կենդանեաց մէջ այս զգայա-
րանին խօսի ռութ է: իսկ ստորին քատու քանի
մի կենդանեաց մէջ, թէ և այս պարունինս սահ-
մանեալ յատուկ գործարան մի չենք նկատեր,
սակայն անենաստը հոտուելիք մի ունին:**

**Հոսուելիքաց սրութեան սպանչելի օրինակ
մեզ կ'ընծայէ Շունն, որ միայն հոսուըրալով
իւր տիրոջ հեաբը յօտարէ կ'որոշէ, և շատ հե-
ռաւորութեամբ որսը կը գտնայ: Անգեղք և
զիամներով սնանող կենդանիք, որք հոտա-
ռուուեամ կենապայն տեղերէ կ'ընթանան և կը
դիմեն հօն որ դիմակ մի կայ: Դարձեալ, կար-
ծես թէ Միհատք ևս սուր հոտուութիւն մի ու-
նին, և այնու թէ իրենց սննդեան ծառայող
հիւթերն և թէ տարբեր սեռի անհատքն կը
գտնեն:**

**115. Լալիիր. — Լսելեօք՝ առածքական մար-
մանց թթթամանէ յառաւ եկող ձայներն կը ըն-
դանք: Լսելեաց գործարանն է սկանչը (Ձև 101)
որ երեք զիսաւասր մասերէ կը բաղկանայ. այսինքն**




Ձև 101. Ականջ

**1. Թիրկի խոռոչ: 2. Եւստաֆիան փող: 5. Սալու 4.
Ուռու: 5. Ասպանդակ: 6. Լոսղական չեղք: 7. Զուամ-
ենուզ:**

**Են արտաքին, միջին և ներքին սկանչը: Արտա-
քին ականջն ձևացնող մասունքն են ականջա-
մենուր (Ձև 102) և արտաքին յական փող: Մի-
ջին ականջն կը բաղկանայ բրդի խոռոչ, բրդի
բաղանիք, և քանի մի փարիկ սկրներէ (Ձև
103): որք իրենց ձևացն համեմատ այլքապէ ա-
նուանք կ'առնուն: ինչպէս ասպանչակ (Ձև
103. 9), ուսն (Ձև 103. 1, 2, 5) և ապ (Ձև 103.
4, 5): Բայց ասոնց՝ գրեթէ բրդապէն ուսկը մի
ալ կայ որ պայնան ուսկը (Ձև 103. 6) կ'առնու-
նի, և թըմբկի թաղանթն ասոր վրայ տարա-
ծուած է: Հուսկ ուրեմն ներքին ականջը՝ ան-
դաստակէ, խալիզոնն և կիսարորոր անցքերկ կը
ձևանայ: Այս անցքերու մէջ կու գտն կը հաս-
նին լողական լցերն (Ձև 101. 6):**

Թամրիկի թաղանթն ձայներէ կը թրթայ, և իւր թրթը ումամբ փոքրիկ ոսկերաց կը բախէ, որք զայն յաջորդաբար կիարուղր անցից մէջ գտնուող ջղային նկոթոյն կը փոխանցեն, և առնցմէ խալիզոնի ձեռօք լսողական նղի և ուղղի կը հաղորդաբար:



Զե 102. Ականջամանթք

— 1) Արտաքին եզր ականջամանթք — 2) Ականջականթք

Եւստարիան փող կոչուածն տեսակ մի խորովակէ (Ձե 101), որ զմիջին ականջ՝ թերանց հետ կը հաղորդակցէ: Ասոր ձեռքով թմրիկի թաղանթի արտաքին և ներքին մասանց վրայ ճնշուով հաւասարակից կը մնայ. և ճետևաբար իւր խորտակումը կ'արգելու՝ որ կրնար զօրաւոր թրթումնէ յառաջ գալ:

116. Տեսանեկիր. — Տեսանեկեօք՝ լուսոյ ազդեցութեամբ ջրակայ իրերն կ'որոշենք, և անոնց ձեւն, տարածութիւնն, վիճակն, դոյնն, համեմատական դիրքն, պայցն, կը ճանչնանք:




Զե 103. Փոքրիկ ոսկերքն ականջաց

1. Ռւռան ներքանդողը: 2. Ռւռան արտաքսակողը: 3. Ռւռան յետակողը: 4. Սալի ներքանդողը: 5. Սալի արտաքսակողը: 6. Ռամիաձև ոտկը: 7. Վազան դակի վերնակողը: 8. Ասպանակի խարիսխը: 9. Ասպանակէ որոյ արժանացն մի մասն հասած է:

Այս զայսարանաց գործարանն է այց (Ձե 104), որոյ կարեւորագոյն մասերն են ասանորակ անաւանեալ բոլորածե կամ ոսպինածե պայծառ

մարմին մի. սառնորակի ետև տարածուած թաղանթն մը որ է ցանցինի. և այս երկուքին մէջ տեղ կը գտնուի եղիշերիկ՝ որ եղջերեաց չերտի մը նմանելուն պատճառու այս անունն կը կրէ: Սակայն նթէ բարձրագոյն կենդանւոյ մը աչքն զննելու ըլլանէք յառաջնակողմանէ մինչև ցյետակողմն երթալով զերու ուրիշ շատ մասեր կը նկատենք: Այսպէս կարծրենայ կելլոնն կը գտնուի բախացիկ եղիշերիկ. ժիածանն որ թիր անուանեալ ծակ մի ունի. առաջակողութեան խոռոյ կամ թափանցիկ եղիշերիկ և ծրածանին մէջ գտնուող միջոցը. յետակողման խոռոյ կամ ծրածանին և սառնորակի մէջուղի գտնուող միջոցն: Սասերակիր ծրածանին ետքունի կը գտնուի. սառնորակի կը յանորդէ ապակինի անուանեալ փամիկուլմի. ապակենաւոյ՝ սերեկներն, և հուսկ ուրեմն ցանցենի: որ կիսաթափանց թաղանթ մի է, և անուական ջղի ձեռօք լուսոյ ազդեցութիւնն ընդունելով զայն ուղեղի կը փոխանցէ:



Զե 104. Աւ

1. Տեսողական ջրդ: 2. Միջին մասն կարծրենայ: 3. Ետակողման մասն միենացն թաղանթի: 4. Արտաքին պարուսակ տեսական ջղի՝ որ կամքրենայ արտաքին հասակն հան կը շարուածէ: 5. Արտաքին պարուսակ տեսական ջղի: 6. Վերին և ստորին ուղիղ մկանք: 9. Թափանցիկ եղիշերի: 11. Թափանթ խոռականիթ յիշերների: 12. 13. Կարծրենայ և հզիշերիկ մրութիւնը յիշերն է ստորին մասագին: 14. Ալցե ֆութանացիկ կամ երակացին յրշանակ ծրածանի: 15. Մերկեկներ: 16. Կարս սերեկներոյ նախաւոր կը թիր գունավետամբ, և կ'յետաստ սահմանափակող ցուցանալու մարմինը: 17. Կարս սորուկանա: 18. Արտանասան մարմին: 19. Յանցինի: 20. Հագուստ ցանցենի: 21. Հոյս թաղանթի առաջակողման սահմանը: 22. Կերպանական լույսակ ցանցենի: 23. Խոնաւակիթ ապակին: 24. Ապակենի թաղանթ: 28. Սանորակ: 29. Ծրածան: 30. Բիբ: 31. Առաջակողման խոռոյ: 32. Ետակողման խոռոյ:

Առաջակողմեան և յետակողմեան խոռոշակարութիւնը ու մէջ խնաւահիւր ջրելիք անուանեալ հեղանիթ մի կը գտնուի սառնորակի մէջ խնաւահիւր սառնորակի, իսկ պականենուց մէջ երրորդ մը որ է խնաւահիւր պասկեղին: Այս երեք թափանցիկ և պայծառ հիմի երն զանազան աստիճանօք զլցու կը բնկիքելին: և զայն առանց տարրաբաշխելու՝ առարկայից պատկերը պատց մէջ կը նկարեն:

Սովորաբար այտց թիւն երկուք է: յումանս շաբական, յայս անշարժ: Ստորին դասու բազմաթիւ երնդանեաց մէջ, օրինակ իմն ՚ի Միջանսու երկորուն շատ աւելի են և անչարժ: և կը բաժնուին ՚ի պար ու ՚ի բարդարիայ: Բազագրեալք: որ ՚ի ուուկ երկու են և զլցու երկու կողմերը կը գտնուին, այսպէս ըսելով, շատ մը պարզ աչաց միամիթենէ կը ձևանան: և նոյն գործարանց շարժական շըլլալուն պակասութիւնը կը լնուն:

117. Ջայն. — Կենդանիք բաց ՚ի վերցիշեալ հինգ զգայարանաց, որք իրարու և իրենց շրջակայ գտնուող մարմնոց հետ վերաբերութեան մէջ են, մասնաւոր ձայներ հանելու կարութիւն մալ ունին: Այս պատճենն միւս կինը դանեաց հետ հարորդակցութեան և զիկնիք բացատրելու իրք միջոցներ կը գործածեն:

Ջայն մը որ և իցէ գործարանէ ալ ելլելու ըլլայ, լսուելու համար ազատ և առաձգական ոչ կը պահանջէ: Այս պատճառաւ ՚ի կենդանեաց անոնք միացն կրնան ձայն հանել՝ որք ազատ օդոց մէջ կ'ապրին: և հետևաբար ջրայինք անկարուգ են:

Քանի մի կենդանեաց ձայնի կազմարանն ներքոստ է, որոց մէջ օդ կ'ընթանայ և մինչեւ շնչառութեան գործարանաց կը հասնայ: իսկ այլոց արտաքրուտ՝ սովորաբար թիկանց կամ որովայնի մրաց կը գտնուին: Առաջնոց կը վերաբերին Ստուսաւորք, Թուունկը, Զեռուուկը և Երկաւենցաւորք, ասոնց մէջ վերցիշեալ գործարանը խիստ կնծուեալ է, և ձայներնին կրնան գեղեղել: Մինչդեռ յետինք, ինչպէս Միջապար, որոց ձայնի գործարանն նշառութեան ծառայող օդոց անցքէն դուռս է, ձայներնին շնեն կը բնաւոր գեղեղել: որով սույոց ձայն մի շտնին, և միայն շնչինք կը հանեն:

Ստանարարց, Թուունոց, Զեռուուն, և Երկաւենցագայ ձայննեւ ինքնայսօժար են: և կենդանին իւր կամացն համաձայն զանոնք կրնայ փոփոխել, մանաւանդ ըստ պատճառաց յորոց շարժեալ զայն կ'արտաքրէ: Սովորաբար այս պատճառներն են բարկութիւն, ցասում, ցառ, խնդութիւն, և այլն: իսկ միւս կենդանեաց ձայներն ամեննեին շնեն բնեկիքիր, միօրինակ են և սոսկ ՚ի բնազգմննէ յառաջ կու գան:

Բարձրագոյն կենդանեաց ձայնի գործարանը խաչափողն է, որ շնչափողն վերին ծայրը կը

գտնուի: Թօաշնոց մէջ մի և նոյն խողովակի ըստորին ծայրը վերինէն աւելի պարզ երկրորդ խաչափող մի ալ կայ: Զասիկայ լեզուակաւոր փշելու գործուց մի կրնանք նմաննեցընել, որոյ կազմուածայն կնճռման համեմատ ձայնի գեղեցիմնց տարածութիւնն այլ կը փոփոխի: Շնդ հակառակն, ստորին դասու կենդանեաց ձայնին կազմարունը աղեղնաւոր գործի մի կրնանք համարել: Այսպէս ամենուն ծանօթ է որ քանի մի Մարախներու շառաչիւնը՝ յոթակի լարերու շփմանէ յառաջ եկող ձայնին կը նմանի:

118. Քուն. — Որովհետեւ կենսական գործառնութիւնք գործարանաց ձեռօգ կը կատարուին, անոր համար պէտք է որ նոյն գործարաններն երբեմն հանգչին՝ որպէս զի գարեւակ իրենց պաշտօնը կարինան ըստ կարու կի յառաջ վարել: Այս պատճառաւ, միան զաման օրուան և զիկերուան ըստ կանոնի մերձենալուն ազգեցութեամբ, կենդանիք ամէն օր կը հանգչին, կամ թէ ըսենք քուն կ'ըլլան. և մանսաւանդ ասոնցմէ ունանք եղանակաց ազգեցութիւնն աւելի ևս զգալով՝ տարւոյն մի ման խորին թմրութեամբ կ'անցընեն՝ որ քննաւորին կը կուն:

Օրուն մէջ ըստ զանազանութեան ժամուց և ժամանակաց յօրս կը հանգչին կենդանիք, զանոնք կրնանք բաժնել ՚ի ուուրնչենային, ՚ի զիկերային և ՚ի վերջարուային:

Տուրենենային
կը կուրփին այն
կենդ ան իք որք
գիշերն երը կը
հանգչին, և օրուան մէջ կերաւ-
կուրնին կը փեն-
ուու են և իք ենց
տեակի յատուկ
գործերը կը կա-
տարեն. այսպէս
շուն, Զի, Թըռ-
շուն, Միջաւ և
այլն: Մինչդեռ
ասոնց հակառակ
բնաւորութիւն
ունեցողփղիքա-
յի են կ'ըստին.




Գլ. 103. Բու-
ինչպէս խու (Գլ. 105), Բուէն. զաման զի մաս-
նաւորապէս զիշերային ժամուց մէջիրենց ընա-
կարանէն կ'ելլեն՝ կերակրոց և այլ իրենց տե-
սակի գործոց համար: Դարձեալ բազմաթիւ
Միջատք, որք կամ քարերու տակ և կամ ժայ-
ռերու ծառոց ու ճնշեցերու մէջ կը բնակին, և
միայն զիշերները իրենց կենաց պահպանութեան
համար տեղերնին գուրա կ'ելլեն: Հուսկ ուրեմն
երջարուայինք կ'ըստին անոնք որք թէ՛ օրն ՚ի
բուն և թէ խոր զիշերուան մէջ բնակարանին:

քաշուած կը նիրէն, և միայն առաւօտեան արշալուսոյն և երեկոյեան վերջալուսոյն անկից դուր կ'ելէն։ Այսպէս օրինակ իմն Զիղզէ։

Դարձեալ քնափորեան ենթակայ եղող կենդանիկ երկու կը բաժնուին ամսնկը միայն ձևունային եղանակը այս վիճակի մէջ կ'անցընեն, և առանք աւելի բազմաթիւ են։ այլք տարւոյն ամենէն աւելի տաք եղանակն։

Առաջնորդ կը վերաբերին Արջամկունք (Զե 106) որ Ալպեան Երանց բարձրագոյն գագաթ-




Զե 106. Արջամունք

Ները կը բնակին. և որովհետեւ ձմեռնային եղանակի մէջ երբ ծիւնել կը սկի՞ իրենց կերակուր չեն կրնար գտնել՝ այն պատճառաւ բագմութեամբ գետնի տակ բնակարանաց մէջ կը քաշուին՝ զորնոք ներմասթեան վատ հաղորդիշ նիւթերով ապահոված են։ Առջարաբր աշնան

սկիզբներն հոն կը մոնեն, և տարւոյն ցրտագին եղանակը քնափութեամբ կ'անցընեն, մինչև որ գարունն սկսի և ձիւնն փարատի Նաև ՚ի Յերմսրին կենդանեաց Առնէոր և Զիղզը ձմեռնային եղանակը քնափութեամբ կ'անցընեն։ Դարձեալ բոլոր պատրին կենդանիք ինչպէս Մողէզք, Գրորոք, Թողօչք, Խորոնչք և բազմաթիւ Մրջաբք. առանք ցւրտէ զանակաց մերձենալուն միջոց կ'անցյատանան, և ապա գարնան կը սկին նորէն երևալ։

Կենդանեաց քնափութեան զիխաւոր պատճառ զցրտութիւն կ'ենթաղրենք. վասնզի փորձուած է որ սովորականն այսիմանաց մէջ քնափութեան ենթարկուող կենդանեաց տեսակն զմեռնային եղանակ առանց քնափութեան կ'անցընեն՝ թէ իրենց աննդեան կարեւոր եղող կերակուրքն գտնեն, և ՚ի ցրոյց պաշտպանուին։

Սովորաբր քնափութենէ առաջ կենդանիք կը գիրանան և կը պարարտանան, որպէս զի երկար ատան իրենց չնառութեան կարեւոր նիւթերն առարաստ ունենան։ Եւ միայն այս գործառնութիւնն է որ կենդանւոյն նոյն վիճակն մէջ թէ և գանդաղ, սակայն միշտ և յարատեալ շարտունակէ։



Զե 108. Կաքար

Տարւոյն Ներմասպին եղանակն քնափութեամբ անցընող կենդանիք սակասաթիւ են. կը յիշատակուին Մեքսիլոյի Կայմանները, և այլք։

119. Գաղրականուրիւնք. — Կենդանեաց մեծ մասն կեանքերնին ծնած երկիրներնուն մէջ կ'անցընեն, և իրենց կենաց յարմարագոյն

պայմանն միշտ հոն կը գտնեն, բայց քանի մի տեսակներ ալ, թէ ՚ի բարձրագոյն և թէ ՚ի ըստ առին դասուց, թերեւս փոփոխ եղանակաց ազգեցութիւնն աւելի զգալով՝ զոր քնափութեան զիխաւոր պատճառ ենթադրեցինք, տարւոյն որոշեալ եղանակաց մէջ կանոնաւոր գաղթա-



Զե 107. Տարմահաւք

կանոթիւնք կ'ընեն
և այնպիսի երկիրներ
կ'անցնին՝ ուր իրենց
կենաց բնաբանա-
կան պայմանին յար-
մարգոյն կը զըտ-
նեն (Ձե 107): Գաղ-
թող կ'են դանեաց
մեծ մասն՝ թռչնոց
և Զկանց դասու-
բազմաթիւ տեսակ-
ներն են. իսկ Ատ-
նաւորաց և Միջա-
տաց դասակարգներուն մէջ քիչ կը գտնուին:

Թռչնաբանք՝ թռչունները ըստ իրենց գաղ-
թականութեան պատճեն կը բաժնեն. կայուն
թռչունը (սոորաբաժանեաթիւ 'ի մշտնիւնաւորք
և 'ի ժամանակաւորք), և անցողական թռչունը:
Այս բաժնաման համեման յԵրոպաս' կաքաւք
(Ձե 108), Անձեզք, Ճնճղովակք (Ձե 109) և
այլք մինչեւնաւորք կայուններն են. որով,
հետեւ իրենց ծննդեան երկրեւ մնն հե-
ռանարք: Ընդ հակառակն նիկունունք (Ձե 110),



Ձե 109. Ճնճղովակք

Լորամարդիք,
Աստղափետուրք
(Ձե 111) և այլ
քանի մի տեսակք,
ուրիշ երկիրնե-
րու համար ա-
մառնայա յին ժա-
մանակաւոր կա-

յուն թռչուններն են. վասն զի միայն տարւոյն
չերմ եղանակին իրենց ծննդեան երկրին մէջ
կ'անցնեն, և ցուրտ սկսելուն պէս անկից կը
հեռանան: Ագռաք (Ձե 112) ճնենային ժա-
մանակաւոր կայուն թռչունք են, որովհետեւ
ցուրտ երկիրներու մէջ կը բնակին. և երբ ձեռո-



տանեն հոն ցորսն կը սասառ-
կանայ՝ յԵրոպաս կու գան:
Հուսի ուրիշնեւ անցողական
կ'ըսուին աննոնք՝ որք քանի
մի գաւառաց մէջ ամսանա-
յին կամ ճնենային ժամա-
նակաւոր կայուն թռչունք
են, և տարւոյն քանի մի ե-
ղանակաց մէջ իրենց ծնն-
դեան գաւառը կը թողուն
ուրիշ երկիրներ երթալու
նպատակաւ բայց այս գաղ-
թականութեան միջոց ճամ-
բուն փայ հանդիպած գա-
ւառաց մէջքիշ մի ատեն կը

կինան: Այսպէս են կրտ-
տարք (Ձե 113), Տորդիք (Ձե 114), և այլք:
Քանի մի Զկունք տարւոյն այս ինչ որոշեալ

եղանակաց մէջ կանոնաւոր գաղթականութիւն
կ'ընեն. այս ինքն է, ծովու աղօտ ջրէն՝ գետոց



Ձե 111. Առշափետուրք

քաղցր ջրերն կ'անցնին, և կամ' ի գետոց՝ 'ի ծով
կը փոխադրին: Օրինակ իմն թռւխու (Ձե 113)

ձուկն որ սովորաբար ծո-
վերու մէջ կ'ապրի, և
սերուղագործելուն պա-
տակաւ մեծամեծ գե-
տեր կը գաղթէ. իսկ ի-
րենց սերունդին զար-
գանալէ յետոյ՝ 'ի ծով
կը դառնան: Ընդ հա-
կառա ակն կ' Օձաձկունք
(Ձե 116) որ գետոց մէջ
կ'ապրին իրենց հաւ.
կիթներն ծովայիլն ջրոց
կ' առ կը ճգեն: Կառ կեռ
մէջ կը ճգեն: Կառ կեռ
ուրիշ շաս գաղթառ Ձկունք, որոց պատճառն
բնապատումք կ'անդիմանան, սակայն փորձ
ձկնորսք քայլ տեղեակ են այնպիսեաց, որպէս
զի կարենան առատ որս գտնել:



Ձե 110. Միեւառ
տարք (Ձե 113), Տորդիք (Ձե 114), և այլք:
Քանի մի Զկունք տարւոյն այս ինչ որոշեալ



Ձե 112. Ագռաք

Կան նաև Զկունք որք շարունակ ծովափանց
եղերքն լուսաբուլը կը պտըտին. և այլք որք 'ի

ծովամիջի խոր սեղուանք կ'ապրին, և տարւոյն որոշեալ ժամանակաց մէջ միայն բազմոթեամբ ծովեզերաց վրայ կ'երևին:



Զե. 414. Տօրդէ

ալ գաղթականութեան սրինակ մի յիշատակած ըլլանք, կը յաւելունք վրայ կ'երևին:

Դարձեալ հետաքըր-
քրական են քանի մի
կրծողաց գաղթակա-
նութիւնքն. բայց բո-
լոր ո վին անկանոն
կ'երապէ կը կատա-
րեն. և ինչ որ կ'երևի-
առոնց պատճառ նոյն
կենդանեաց ըստ բա-
ւականի կերակոր ըլ-
քանելն է:

Վերջապէս, որպէս

զի Միջատաց դասէն

ալ գաղթականութեան սրինակ մի յիշատակած ըլլանք, կը յաւելունք ևս Ասիս և Ափրիկոյ կի-

զանուտ և այրեցող գաւառներէն հեռաւոր աշխարհներ գաղթող Մարախիներն: Ամենուն ծանօթէ թէ այս կենդանինք ինչ մեծամեծ կեանեն կը հասցնեն արտերու՝ որոց վրայ կ'ինչնեն, քիչ ատենուան մէջ և ոչ իսկ մշակու- թեան հետպն թողով:

Շարժուրին


120. Շարժուրին. — Առընչութեան կենաց միւս գործ առնութիւնն յարդուրիւնն է. այս գոր- ծառնութեան համար մկնային հիւսուածէ բաղ- կացեալ յատուկ գործարանք սահմանուած են որք միունք կը կոչուին:

121. Մկունք. — Մկունք՝ կակուղ և զու- գահեռական կարմրագոյն նեարդներէ կը բաղ- կանան իրկու տեսակ են. ոմանք լժակներու կամ ոսկերաց կցեալ՝ որպէս զի ըստ կամաց և ըստ նպատակի կենդանւոյն անոնց շարժումն



Զե. 415. Թուբու

պատճառեն, և կենդանական կենաց, կամ իս-
մաշարժ, և կամ արտաքին միջունք կ'անուանին: Անկ կրծային և որովայնային մեջ խոռոչի մէջ բովանդակուող աղիքն կը շրջապատն, և տրե-
կային կենաց, կամ ինքնաշարժ, կամ ներքին, և կամ աղիաց միունք կը կոչուին:



Զե. 416. Օձանուկ

Մկունք կենդանեաց կարեւորագոյն գործա-
րանքն են, և ՚ի բնութեան խիստ շատ կը գըտ-
նուին. այնպէս որ կրնանք ըսել թէ մկնային
դրութիւնն միւսներէ աւելի զարգացած է. և ՚ի
Մարդոս ըստ հասակի, սեռի, անհաստի, առող-
ջութեան, հիւսներութեան կամ արուեստից կը
տարբերի: Մկունք, ինչպէս ըսինին, խիստ բազ-
մաթիւ են. և քանի մի Անցամանընաց խօսից
համեմատ մինչև 400 կամ 470 կրնան հասնիլ:
Պանազան ձևեր ունին, քառակուսի, տրապի-
զաձև, երկայնաձև, և այլն. Սակայն իրենց
շրջապատած սկսիրց ձևոյն համեմատ՝ զիբենք
երեք դասի կրնանք վերածել, այս ինքն են եր-
կայշ լայշ և կարծ միունք:

Երկային մկունք զանդամն կը պատեն և սովո-
րաբար բրգաձև են: Լոյն մկունք իրանի խոռո-
շըն և շրջապատն կը ժածկեն. մակերեսութիւն
վրայ տարածուելով կորպաֆի ձև կ'առնուն, և
իրարու վրայ շարուած և մէջն մէջ կիւսուած մա-
կարդակներ կը կազմեն: Իսկ այս ամէն տեղ ուր
ուկեր բազմաթիւ են՝ կարծ մկունք կը գտնուին.
Բնչպէս ՚ի ձեռս, յատու և ողնայարի ստորակող-
մեան մասն: Իրենց մէկ ժայրով կմսնիքի, կամ
ոսկեր, կամ աճառի, կամ ձգուածի, կամ մոր-
թոյ, և կամ երբեմն գործարանի մը վրայ հաս-
տառուած են: Բայց մեծաւ մասամբ ոսկերային
ծակերու, ոսկերց զլուխներու, անհաւասա-
րութեանց և երւանդներու կցուած են:


Այսպէս մկունք կարմրագոյն կամ սպիտա-
կագոյն նեարդային և յետին աստիճանի ծիկա-
կան գործարանք են. նուրբ խորերէ և քովէ-
քով շարուած կարմիր թեթերէ կը բաղկանան:
Զասունք կազմող կարմրագոյն, կակալաղ և կծկա-
կան նեարդային սուոյց մկնային հիւսուածն կը
ձևացնեն. իսկ սպիտակագոյն և կարծը նե-
արդներն՝ կվարթու և միտթեան կցուածքն կը
կտուին: Այսիտակ նեարդք առանցքի մը շրո-
կորմն կոնածե կամ զլանածե երբ կը ժողովին՝
կոտր անունն կը կրեն Ձե (117, 10, 12, 15).
ասոնց մէջ ամենէն նշանաւորն Աքիլլես կար-
րին է՝ որ գարշապարի սոկեր հետ կը կցի:

122. Կմանիք. — Ոսկերաց մկութենէ սոսոյդ
կմանիքն կը ձևանայ, որ կենաց կարևորագոյն
գործարանքն պահպանելու կը ժառանչ. ման-

ւանդ զներագանկն: Առվորաբար երեք գլխաւոր մասունք կը բաժնուի, զոյսի, իրան և անդամի:

Երբ ուղենանք որ և իցէ կենդանւոյ մի կմախքն քըն քննել, իւր մատունքն այնպիսի կմախքի մի հետ կը բաղդասանք՝ զոր իրը նախագաղափար առած ենք. և այս է ընդհանրապէս Մարդու կմախքն (Չե. 118):

123. Գլուխու ։ — Գլուխուն երկու մասերէ կը բաղկանայ, որք են զանի և երևս: Գանձին (Չե. 119) հաւկթաձեն ոսկրային տփոյ մի կը նմանի, և զինոյ վերին յետակողմեան մատին մէջ զետեղուած է: Անշարժ կերպով իրարու հետ միացեալ այլ և այլ ոսկրներէ կը բաղկանայ՝ որք են հակառակի կամ պսակային ոսկր, երկու կողմանական ոսկերք, երկու քոչնքոսկերք, և եւ-



Չե. 118. Կմախք Մարդու

բազանիկան ոսկր, սկսովսկ և մասովսկ: Գանձիք ստորակոտմն զանազան ծակեր կան յորոց գէսոյ յուղեղ ընթացող արհճակալ անօթքն կ'անցնին, և ուղեղէ ծեկնող զլեր և անօթներ կ'իջնեն: Այս ծակերէ մեծագյնն ենթագանիւան ոսկերն է՝ ուսկից ողնածուծն դուրս կ'ելէ: Գանձէալ մի ևնոյն ոսկեր արտաքսակողմն, և

վերյիշեալ ծակի երկու կողմէն յօդանելով անուանեալ զոյգ մի գուրս ցցուած ոսկերք կան և ասոնցմով գլուխին՝ ասդաւս կողուող ողնայարի առաջին ողնան հետ կը յօդարորի:

Յերեսս խիստ տարրեր ձեւերով տասն և չորս ոսկերք կը գտնուին. որք են երկու վերին կզակայինք, երկու ոնդայինք, խոփոսկ, երկու

բունքաղթայինք, երկու արտասուսկանք, երկու քմնիսներ, երկու եղբերադիդր, և ծամելիք՝ որ միայն շարժական է: Դարձեալ երեսաց վրաց հինգ մեծ խոռոչք կան, յորս տեսանելեաց, հո-

տոտելեաց, և ճաշակելեաց գործարանք զետեւ դուած են. այսինքն երկու ակնահապիչը, երկու սկզբային խորքը, և բրենի խոսուն:

Կզակային ոսկերց և ծամելեաց, եղբարաց վրաց՝ կասիմք անուանեալ յատուկ ծակեր կան, և ասոնց մեջ հաստատուած են ծապողութեան գործարանք. այսինքն երեսուն և երկու առա մունք. կամ թէ ըսենք ութ հերձատամունք, շորս շնատամունք, և քսան աղօրիք:

124. իրան. — ի.

րանեն գլխաւորաբար
ող և այ ար է, և ապա
կողերէկ և քանիք իր կո.
դամաներէ կը բաշ.
կանայ: Յետինք յու-
մանս ՚ի կենդանեաց
կամ բուրով փին կը
պակսի՞ն, և կամ
սոսկ տարրական են:


Ո զն այ ար ն' (Զն

120) ողունք անուան-
եալ բազմաթիւ ոսկե-
րաց շարքէն կը ձեւա-
նայ, և մարմարոյն յե-
տակողմեան միջին գի-
ծըն կը զրաւէ: իրա-
քանչիւր ողն իրարու-
համապատասխան
լայն բացուածք մի ու-
նի. և ամէնքն իրեաց
հետմիանալով տեսակ
մի անցք կը կազմնէն ո-
րսց մէջ պարունա-
կուած է ողնածուծն: Պար-
ձեալ մի ողնն երկու
մասն ունի, մին կազ-
մուածք յիսեսան ողին
անուան եալ լայն և
սկզբանակ. և միւսն
երկուար կոչուածքն:

Զն 120. Ունահար.

կամ թէ ըսենք դուրս
ցցուած այն մասերն՝ որովք ողունք իրարու հետ
կը յօդաւորին, և ողնայարն առաւելացոյն
ամրութիւն կը ստանայ:

Ի Մարդու երեսուն ողունք կան, յորոց եօթն
ծորակայինք են, տան և երկուք րիկնայինք,
հինգ միջայինք, շորս կիուայինք: Երդայնափող
թռչնոց մէջ (Զն 121) աւելի բազմաթիւ կ'ըւ-




Զն 117. Մկունք սրունք
(արտաքին կողմակի մասանց)

3. Առաջին առաջակողման մուկն: 2. Ռնաւան-
տանց ձգտեցոցի մուկն: 5. Բժժամանին ձգտեցոցի մուկն:
4. Ճարմանդի առաջակողման մուկն: 5.
Ճարմանդի կողմակի կարճ մուկն: 6. Ճարմանդի կողմա-
կի երկայն մուկն: 7. Ներքանային մուկն: 8.
Ալբոաքին երկուորեակ մուկն: 9. Գլուխ ճարմանդի:
10. Կարթ բարձր երկիր մկան: 11. Կիսաթարան-
թեայ մուկն: 12. Կարթ բարձր երկիր մկան: 13.
Կցուան Աքֆլիան կարթի ընա ոսկեր քարշազարի: 14.
Ալբոաքին պընենք: 15. Վերին օղականք. կազ ուլան
սորից: 16. Կցուան առաջակողման ճարմանդի ընդ
հինգերորդ վերանայթային ոսկեր: 17. Կցուան այն
ոսկեր ընդ կողմակի կարճ ճարմանդային մկան: 18.
Ռնային մրկուուք: 19. Ութց ծայրամատին կորացու-
թէ կարճ մուկն: 20. Մկուուկը:



Զն 119. Գանէ



Զն 120. Ունահար.

* Ա. Ա. Փայլան ելուստ: Բ. Բ. Յօգաւոր ակնկեներնեց
Բիկնային կողմակի ելուստներու: Դ. Յօգաւոր ան-
կեներնեց արբանակեր: Ե. Ե. Անցք կողմակի ելուստ-
ներու, ոսկեց ողջային շներալը կ'անցնի: 4-7. Ծով-
րակային ողունք: 7-19. Թիկնային ողունք: 20-24.
Մելայինք: Գ. Կկու:

լան. և երկարագոյն պող ունեցող կենդանեաց մէջ (Ձև 122) գեռ աւելի են թուով:



Ձև 121. Հայ

Կողերն թիկնային ողանց հետ կը յօդառորին. և ողնայարէ աղնդանձն մեկներով սովորարար գէպ յառաջ կու գան, և

քանին մի սոկերաց հետ կը միանան: Զաւոնք կողաձառ կոչեցինք, և իրենց ամբողջութեան լրտուիր (Ձև 123) անունն



Ձև 122. Սալամանդր

կու տանք: Այս կրծոսկըն, որ եր-


բեմն բոլորովին կը պակսի, ինչպէս Յձերու մէջ, բազմատեսակ փոփոխութեանց ենթակայ է, Երկրի վայ լրջող կենդանեաց մէջուղիդ կ'ըլլայ. իսկ կու յարձացողաց մէջ խիստ գոգաձառ, օրինակ իմն 'ի Ջիղջս և 'ի Թոշունս:

Դոյն իսկ կողերու թիւն 'ի զանազան դասու կենդանին կը փոփոխի. յոմանս հազիւ տարբական է, և կամ բոլորովին կը պակսի: Ասկորաբար միշտ շարժուն են. խիստ քիչ անգամ անշարժ ինչպէս 'ի Կրիայս:

125. Անդամք. — Անդամց թիւն բազմաթիւ Ոլնաւորաց մէջ շրու է. և ասոնց կազմութիւնն կը տարբերի ըստ սովորութեանց կենդանւոյն և ըստ հանդամանաց՝ յորս Ապարի: Անդամք ըստ իրենց դրից կը զանազանին յաշաշակողմանիք կամ 'ի իշտայիք, և 'ի յնտակողմանիք, կամ 'ի կոնքայիք:

Առաքակորմնան անդամք. — Առաջակողմնան անգամք սովորաբար բազուիք կը կայուին. և 'ի Մարդու գագաթնահայեաց դրից պատճառաւ վերին անդամք 'ի ըլլան: Յետապայ մասերէ բաղկացած են, ուս, բազուկ, ժղիք և ձեռն:


Ուս. — Ուսն երկու ոսկրէ կը ձևանայ, որք են. ուսուիր և անրակ: Ուսուկըն (Ձև 124) որ լայն, նուրբ և եռանկիւն ձև մի ունի՝ ուսոց յետակողմն կը կազմէ:



Ձև 123. Կրծոսկը Մարդու

1. 2. Կրծոսկը: 3. Այսածայր յակելուած: 4. Կազմածք լիսեռան առաջին միջիացին ողիւ: 5. Կազմածք լիսեռան երկուասաներորդ թիկնային ողիւ: 6. Առաջին կող: 7. Անոր գլուխին: 8. Անոր պարանորին: 9. Անոր խորաքրութան: 10. Երթներորդ և յասին կող կրծոսկայիր: 11. Կողանաւ եօթներորդ կողի: 12. 13. Երկու յաման ուստ կողք:

Բազուկ. — Բազկաց մէջ մէկ ոսկր միայն կը գտնուի և է բազիսկը:



Ձև 124. Ուսուկը յատակողմն

1. Վերափային խորլ: 2. Ենթափային խորլ: 3. Եղբար ապուապին: 4. Աղեղն ապուապին: 5. Եղբար ապուապին: 6. Գողման եռաձիք մկան երկար մասին: 8. Փոքր խորլ կցման եռաձիք մկան երկար մասին: 9. Դեղքին եղրէ: 10. Փուշ ուսուկերէ: 11. Ծովակիւնային մակերեւոյթ: որոյ վրայ կը խաղաց տրապիզի կցման ձգուածք: 12. Ուսածայր: 13. Փույն սատրին երեսը: 14. Աքաւանձն ելուստ:

Ծղիք. — Ծղեաց մէջ երկու՝ հրոսակը և ժրդուկը կայ:

Զեն. — Զենքն երեք մաս կը բաժնուի. դաստիկ, վերևաձևն և մատուեք: Դաստակն յութ ոսկերց կը բաղկանաց որք երկու կարգ շարուած են. վերնաձեռնն հինգ. իսկ մասունքն տասն և չորս, որք և մասանսկիրք կ'անուանին. իւրաքանչիրք մատի վրայ թուով երեք են, միայն թթամատն երկուք ունի:

Յետակողման անդամք. — Յետակողմեան անդամք, որ ճշտ խօսելով սրուեք կը կոչուին, 'ի Մարդոց քագաթնաւոյեաց զրից պատճառաւ սու ստորին անդամք կ'ըլլան: Յետակողմանք սերէ բաղկացած են. ազդր, բարձր, սրուեք և ուն:

Ազդր. — Ազդրն միայն 'ի կոտուակը (Ձև 125) կը ձևանայ, որ յառաջակողմանէ իւր համապատասխան ոսկեր հետ և 'ի յետակողմանէ սրբանոսկեր հետ միանալով՝ զորովայնակուեք կը կազմէ:



Ձև 125. Կշտոսկեր արտաքին երեսն

1. Վերին մասն կամ պալարոսկը: 2. Ստոր ինչ մասն կամ պատուկը: 3. Առախակողմեան մասն կամ ցայսը լրակը: 4. Գագաթն կշտոսկը: 5. Արտաքին խորշ կշտոսկը: 6. Երասանաց փորք մկամ ծածկեալ մակերակը: 7. Որոթանե խոռոչը: 8. Առախակողմեան և վերին փուշ կշտոսկը: 9. Առաջակողմեան և ստորին փուչ կշտոսկը: 10. Ցեղակողմեան և մերին փուչ կշտոսկը: 11. Ցեղակողմեան և ստորին փուչ կշտոսկը:

Բարձր. — Բարձն 'ի բարձուակը միայն կը ձևանայ:

Սրունք. — Սրունքն երկու ոսկերք ունի. ոլոր և ձարձնեալ:

Ունի. — Ունին երեք մաս կը բաժնուի. ուշն, վերնարար և մատուեք:

Հինգ. եօթն ոսկերք ունի. վերնաթաթն հինգ. իսկ մատունք տասն և չորս:

126. Շոշանակերպ ոսկերք. — Բաց 'ի վերոյն կշտակը յառաջակ, որք իրարու հետ յոդառուած մէջոցներ չունին:

Իւեալ են և ստորդ կմախաքն կը կազմին, կաննակ ասանցմէտ անջատեալ ուրիշ քանի մի ոսկերք, որ շուրջակիրազ ոսկերք կը կոչուին. այսպէս են օրինակ իմն, բարձր սրունք հետ յոդառուած տեղույն առջև գտնուուղ ժնկակիերք:

127. Եղունգն և սերս. — Մատունք՝ սուգարար եղջերեաց յաւելուածով մի պատրապատուած են. որ երրժայրի մէկ մասն ծածկէ եղունգն կը կարուի. իսկ եթէ ամբողջուակէս զայն պատէ՛ տիրակ կ'անուանուի:

Գիխաւորապար մասակերաց և մագլցող կեն. դանեաց եւ զուն դն երն խիստ զօրաւոր են. վասն զիթէ վասակը և թէ ունելութեան գործ արանաց տեղ զանոնք կը ժառացնեն:

Եւ յիրաւէի յափշտակիշ թուշնոց (Ձև 126), Արփիւտոց, Վագերց (Ձև 127), և բազմաթիւ մնացող Զեւնոց մէջ՝ զօրաւոր երկայն և սուր են. ընդ հակառակն խոտակիեր տեսակաց մէջ կարև և բութ կ'ըլլան, կամ նաև 'ի սմբակէ կը փոխանակուին (Ձև 128). վասն զի իրենց անդամեն իրը յենարան և տեղափոխութեան գործարանք կը ծառայեցընեն:

Ամենայն կնոնդանիք մի և նոյն արագութեամբ չեն շարժիր: Սովորարար մասկերք յընթացս




Ձև 128. Հընդկեղն

արագագոյնք են, որպէս զի դիրաս կարենան երենց սրունք ետևէն համնիլ և զայն ձերքակալ լիւ. Դարձեալ, այն ամէն երկլու կենակուիք որք անձնական պաշտպանութեան միջոցներ չունին, և իրենց թշնամեաց ձեռքէն փախըս-

տեսամբ միայն կրնան զերծանիլ, Անոր համար եթէ երագագոյնք և արթունք են՝ ի շարժմունս թովազք, Առիւծք և երկշռութիթք, ասոնց հակառակ Փիղն դանդաղ է. վասն զի իւր թշնամյան ձեռքէն ապատելու համոր բաւական պաշտպանութեան միջոցներ ունի. ինչպէս ժանիք և պատիճ:

127. Պատենային կմախր — վերյաստրա-

գրեալ կմախք՝ որ ՚ի ստոյգ ոսկերաց և յաճառաց կը ձևանայ, ընդհանրալոյն ներքուստ է, և միայն բարձրագոյն գոտու կենդանեաց մէջ կը գտնուի: Բայց աւելի պարզ կազմակերպութիւն ունեցող ՚ի բազմաթիւ կենդանին՝ նոյն կմախքն արտաքուստ մարմեսն մակերևութիւն վրան է և պատենային կմախք կը կոչուի: Զայն բաղկացնող կարծր մասունքն սովորաբար կրա-



Զե. 127. Վագր

յին կամ եղջերեայ նիւթերէ կը կազմուին. որով պատենային կմախքն ոչ միայն զրիւք, այլ նաև իւր բարդրութեամբ ՚ի ստոյգ կմախքէ կը տարբերի: Գրիթէ ամենայն խեցեմրթից և բազմաթիւ Կակամարթից պատենային կմախքն իրացի իրային է մինչեւ անթիւ Միթասաց, օրինակ իրային է մինչեւ անթիւ Եղջերային է:

Ստոյգ կմախքն յ՛լջնաւորս ինչ պաշտօն որ կը կատարէ՝ պատենային կմախքն ալ ստորին

գտառու կենդանեաց մէջ մի և նոյն նպատակին կը ծառայէ: Այսինքն է, գլխաւոր աղիքներն կը պաշտպանէ, և շարժման ծառայող մը կունքն՝ իւր վրայ հաստատուած են: Բայց արտաքուստ ըլլալուն պատճառաւ, միանգամայն զմկունս կը պաշտպանէ, և շատ դիպաց մէջ նաև պատսպարտութեան գործարան մի է ամբողջ կենդանւոյն:

կը շարունակուի:

Հ. ՊԱԽՂՈՍ ԳԱՅՔԹԱՆ

Հաւկիրերը պահերու կերպ — Դնել հաւկիթները բարակ թեփի մէջ, նուրբ ծայրը դէպ ՚ի վար: Այս կերպով պահողը առաջին մրցանակ առաւ Անգլիա 1887ին: Իսկ երկրորդ մրցանակը առաւ այն՝ որ հաւկիթները մոմով և ձիթով օծած պահեր էր աղի մէջ և երրորդ մրցանակը առաւ այն՝ որ ճարպով օծած էր կրաջրոյ մէջ գրած էր հաւկիթները, օդէն պահպանեալ:

Դիւրին կերպ մալ կայ հաւկիթները մինչեւ ձմեռուստ խոր պահելու համար: Դնել հաւկիթները սնառուիի մէջ կարգու, նուրբ ծայրը դէպ ՚ի վար, և աղով ծածկել, և այս պէս կարգ կարգ մինչեւ սնառուկը լցուի, և պահել զով տեղ: Եւ գործածելու ժամանակ շրջել սնառուկը, այնուէս որ տակի հաւկիթները վրայ գան, և կափարչին պտուտակները հանելով, սկսիլ կարգաւ դործածել հետքհետէ: